


ՄԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՄԻՆ, ՈՍԿԵՂԷՆ ԽՕՍՔԵՐ ԽՐԱՏՆԵՐ ԵՒ ՊԱՏԳԱՄՆԵՐ

ՆԱՄԱԿ ԱՂՔԱՏՆԵՐՈՒ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ դուսն, որ չֆաւոր ես եւ աղֆատ, ի՞նչու Աստուծոյ մասին անդադար բաներ կ'ըսես: Աստուած իրեն պատկանող որեւէ բանէ զրկե՞ց քեզ: Եղբայրներու նման հարուստին եւ աղֆատին հաւասարաբէս չբաժնե՞ց նոյն աչքերը, նոյն ձեռքերը եւ նոյն ոտքերը: Հաւասարապէս կը վայելենք արեւը, օդը եւ անձրեւը: Բոլորս ալ յառաջ եկած ենք հողէն եւ Ադամէն: Բոլորին համար կայ միայն մէկ մկրտութիւն, մէկ շնորհիք, մէկ մարմին ու արիւն Քրիստոսի: Բոլորիս համար կայ մէկ երկիր, մէկ երկիրնիք եւ մէկ տիեզերական նիւթ: Ահաւասիկ ասոնք են Աստուծոյ բարիքները, որ Ան հաւասարապէս տուաւ թէ՛ աղֆատին եւ թէ՛ գորտերին: Ուրեմն ի՞նչ բանէ զրկեց քեզ եւ կողմնակալութիւն ըրաւ ի նպաստ հարուստներու: Գիտեմ, որ այս մասին ոչինչ ունիս ըսելիք, այսուհանդերձ կ'ըսես. «Ո՞րքե՛տ անոր այսքան հարստութիւն»: Լաւ հասկցիր, Աստուած չէ, որ իրեն բերաւ, ցոյց տուաւ կամ շնորհեց այդ հարստութիւնը եւ քեզ զրկեց: Ոմանց հարստութիւնը գոյացաւ ագահութեամբ, ոմանցը՝ յարատեւ աշխատանքով, իսկ այլոցը՝ հօրեակալական ժառանգութեամբ:

(Ճանորք՝ Յովհանն Մանդակունի)



ԵԿԵՂԵՑԻՆ

Հայ Եկեղեցին հայ կեանքին հետ անքակտելիօրէն շաղխուած հոգեւոր տունը դարձած է իւրաքանչիւր հայուն:

Անոր սրբազան կամարներուն ներքեւ է, որ հայ մանուկը Սկրտութեան Ս. Խորհուրդով վերածնած է եւ դարձած որդեգիրը երկնատուր Հօր եւ հարազատ զաւակ եկեղեցւոյ:

Հայ երիտասարդն ու երիտասարդուհին իրարու հանդէպ իրենց ունեցած սերը նուիրագործած են Ս. Պատկի Խորհուրդով, կազմելով օրհնեալ հայ ընտանիքը:

Եւ իւրաքանչիւր հայորդի իր կեանքի աւարտին, թաղմանական կարգով ստանալէ ետք հրաժեշտի նուիրական օրհնութիւնը, կը դառնայ ճանապարհորդը յաւիտենականութեան: Այսօր, նուիրական եւ սուրբ այս կառոյցը՝ Հայ Եկեղեցին, որքան որ գեղեցիկ ըլլայ իր ներքին թէ ափսոսանքին ճարտարապետութեամբ, մենք պէտք է գիտնանք զայն պահել իր ոգեղէն գեղեցկութեան մէջ:

ՎԵՐՋ

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԸՆԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ](#) [jcrak](#) [ճրագ](#) [թերթ](#)



ԸՈՒ ԽՕՍՔԻ ԽՍ ՂՅԵՐՈՒՄ ԵՌԱԳ Է ՈՒ ԽՍ ԸՄԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 11 ՅՈՒՆԻՍ 2021

ԹԻՒ 28

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ՍԱՏՈՒԾԱԸՆԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Իմաս. 7.25-8.4: Չք. 14.16-21: Ա. Յհ. 1.1-7:
ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 16.13-17.13

ՏՕՆ ՊԱՅՆԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 16.13-17.13

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եթէ մէկը ուզէ ինձի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ: Որովհետեւ ով որ ուզէ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ ինձի համար կորսնցնէ իր անձը՝ պիտի գտնէ զայն: Ի՞նչ օգուտ, երբ մէկը ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ, որովհետեւ որեւէ բանով չի կրնար իր կեանքը ետ առնել: Արդարեւ, երբ մարդու Որդին գայ իր Հօր փառքով իր հրեշտակներուն հետ, իւրաքանչիւրին իր գործերուն համաձայն հատուցում պիտի կատարէ: Վստահ եղէք, որ հոս գտնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ իր թագաւորութեամբ»:

Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց. իր դէմքը արեւու նման լուսատու դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղան: Եւ ահա երեցաւ Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ:

Պետրոս ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, ի՞նչ լաւ է հոս: Եթէ կ'ուզես երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար»: Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսատու ամպ մը ծածկեց զիրենք: Ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր. «Այս է իմ սիրելի Որդիս, որ հաւնեցայ. անոր մտիկ ըրէք»: Երբ աշակերտները լսեցին ասիկա, սարսափահար՝ երեսի վրայ գետին ինկան: Յիսուս մօտենալով՝ դպաւ անոնց եւ ըսաւ. «Ոտքի ելէք, մի՛ վախճաք»: Աշակերտները իրենց աչքերը վեր բարձրացուցին եւ Յիսուսէ գատ մարդ չտեսան:

Եւ մինչ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց, ըսելով. «Մինչեւ, որ մարդու Որդին մեռելներէն յարութիւն չառնէ, ձեր տեսածը ռեւէ մէկուն մի՛ պատմէք»: Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի. «Հապա ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն, թէ նախ Եղիան պէտք է գայ»:

Յիսուս պատասխանեց. «Ճիշդ է, Եղիան նախ գալով՝ պիտի պատրաստէ ամեն ինչ, բայց զիսցէք, որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն մարդիկ զայն չճանչցան եւ անոր հետ վարուեցան, ինչպէս որ ուզեցին: Նոյնպէս ալ մարդու Որդին պիտի չարչարուի անոնց կողմէ»: Այն ատեն աշակերտները հասկցան, թէ Յովհաննէս Սկրտիչի մասին կը խօսէր ան:

ՏՕՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐԳԱՎԱՌ



Վարդավառը ժողովրդական այն անունն է, որ կը տրուի Հայաստան-եայց եկեղեցւոյ հինգ գլխաւոր տօներէն «Այլակերպութիւն» կոչուող տաղաւարին: Այս նոյն տօնին կը վերագրուի նաեւ երրորդ կոչում մը, որն է «Պայծառակերպութիւն»:

Պայծառակերպութեան տօնը, ամէն Տէրունական տօներու նման, կը վերաբերի Յիսուսի կեանքէն յատուկ դրուագի մը՝ Անոր փառաւոր ու լուսաւոր կերպով երեւնալուն երեք առաքելութիւն՝ Պետրոսի, Յովհաննէսի եւ Յակոբոսի, Գալիլիոյ սուրբ լերան վրայ: Ահա, թէ ինչ ձեւով կը ներկայացուի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան դրուագը Մատթէոսի աւետարանին մէջ:--

«Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին:

Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց: Իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ներմակ եղան: Եւ ահա երեւցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի.

- Տէ՛ր, ի՛նչ լաւ է հոս. եթէ կ'ուզես, երեք վրաններ շինեմք, մէկը քեզի, մէկը Մովսէսին եւ միւսը Եղիային համար:

Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք: Ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր.

- Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հանեցայ, անոր մտիկ ըրէ՛ք»(Մտ. 17.1-6):

Վարդավառի կամ Այլակերպութեան տօնին վերաբերող ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող աւանդութիւնն է ջրախաղեր կատարելու աւանդութիւնը:

Կ'ըսուի, թէ Վարդավառի տօնակատարութեան ընթացքին մանուկներ, ծերեր, այրեր ու կիներ տուններու մէջ, փողոցները, դաշտերը, գետերու ափին, աղբիւրներուն եւ առուներուն մօտ կուժերով իրարու վրայ ջուր կը թափեն եւ զիրար ջուրներուն մէջ կը մխրեն: Այս աւանդութիւնը Նոյի ժամանակներէն մնացած է Հայաստան աշխարհի մէջ:

Աւանդապատում

Յարգելի Ընթերցող Տաղաւարաց տօնին մեր եկեղեցիներուն մէջ հոգեհանգիստ չի կատարուիր. անոր յաջորդող օրը Մեռելոց է:

Տէր առաջնորդէ մեր հոգին զայն այլակերպելով, որպէսզի վերանորոգուած հաւատով արժանանանք յաւիտեանական կեանքին: ԱՄԷՆ

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ՈՐ ԳԱՐԱՇԻՉՆԻՆ ՄԷՋ Կ'ԱՊՐԻՆՔ

Երրորդ օրը հարսանիք մը կար: Մեծն Կիւրեղ «երրորդ օրը» բառերուն մէջ խորհրդանշական իմաստ մը կը տեսնէ նաեւ: Ան կը հաստատէ, թէ Յիսուս իր հարսանիքը կատարելու համար իր եկեղեցիին հետ՝ իր եկեղեցին եկաւ երրորդ հանգրուանին: Առաջին հանգրուանը, կ'ըսէ Կիւրեղ, Օրէնքի տուչութենէն առաջ ապրած հայրերուն ժամանակաշրջանն է, երկրորդ հանգրուանը՝ Օրէնքի շուքին տակ ապրած մարգարէներուն ժամանակաշրջանն է, իսկ երրորդ հանգրուանը՝ շնորհքի դարաշրջանն է:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Մենք ո՞ր դարաշրջանին մէջ կ'ապրինք: Տակաւին Օրէնքը չստացած հայրերն ու դարաշրջանին, Մովսիսական Օրէնքի՞ դարաշրջանին, թէ՛ Քրիստոսի աշխարհ բերած փրկարար ՇՆՈՐՀՔԻ դարաշրջանին: Միրելի ընթերցող, եթէ կը խորհիս, որ բարի գործերովդ եւ իրագործումներովդ կարող պիտի ըլլաս փրկութիւն ձեռք ձգել, գիտցիր, թէ դուն տակաւին Օրէնքի ստրկութեան տակ է որ կ'ապրիս, եւ կեանքիդ մէջ չես ընդունած Քրիստոսի փրկարար շնորհքը: Միրելով ապրինք մեր կեանքը:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆՂԷՊ ՔՈՒ ՎԱՏԱԿՈՒԹԻՒՆԻ Կ՛ՈՒՉԵՍ ԱՐՏԱՅԱՅՏԵԼ, ԿԱՐԿ՝ ՍԱՂՄՈՍ 27

Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, որմէ՞ պիտի վախնամ ես: Տէրն է կեանքիս ապաւէնը, որմէ՞ պիտի դողամ ես:

Չար մարդիկ, որոնք հետս թշնամացած՝ զիս կը հալածեն, փորձեցին միսս ուտել, սակայն իրենք տկարացան եւ ինկան: Նոյիսկ եթէ ամբողջ բանակ մը վրաս յարձակի, սիրտս վախ պիտի չզգայ նոյնիսկ եթէ ինձի դէմ ճակատամարտ յարդարուի՝ դարձեալ Աստուծոյ պիտի վստահիմ:

Մէկ բան խնդրեցի Տիրոջմէ, եւ սա՛ է աղաչանքս.- Կեանքիս բոլոր օրերուն Տիրոջ տան մէջ բնակիլ, ըմբռնել Տիրոջ վայելչութիւնը, եւ զի՛նք պաշտել իր տաճարին մէջ:

Նեղութեան ժամանակ իր յարկին տակ պիտի պահէ զիս, իր տաճարը զիս պիտի պատսպարէ, ամուր ժայռի վրայ պիտի կանգնէ զիս:

Եւ ահա գլուխս բարձր պիտի կանգնիմ զիս շրջապատող թշնամիներու դէմ, եւ ուրախ աղաղակով գոհեր պիտի մատուցանէմ Տիրոջ տաճարին մէջ, պիտի երգեմ ու նուագեմ իրեն համար:

Ո՛վ Տէր, լսէ՛ աղաչանքս, երբ քեզ օգնութեան կը կանչեմ, ողորմէ՛ ինձի եւ պատասխան տուր:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԿԱՆՔ